

ալ կ'ընէ : Արբոր մէկը իր անձին հա-  
մար արուեստ մը որոշէ՝ պէտք է որ ըն-  
տրուածեանը մէջ հաստատուն կենայ .  
վասն զի անդադար արուեստը փոխող

մարդը բան չաճիր , ու շատ արուեստի  
ետեւ ինկողն ալ և ոչ մէկը կատարեալ  
կրնայ սորվիլ :

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

Այսուայ երկրաշարժութեանը վրայ Աբար Արամի յանպարաստից երգած երգը :

ԱՅՑԵԱԼ ամուսնան 'յաճապետին  
Մասիսուն Սարերը կը յիշեցընեն մե-  
զի այն լեռներուն պատահած զիպուա-  
ծը 1840ին , մեծ երկրաշարժութեամբ  
Մասիսին աճազին երերմունքը և քա-  
րեր թաւալելը , Այուուոյ գեղին ծած-  
կուիլը այն քարերուն տակ , և տղմա-  
խառն ջուրը որ Մասիսու վճէն իջաւ ,  
երբոր բոցապոյն ծուխը դաղրեցաւ ըն-

չելէն : Այն տարին Արեանու գաւա-  
ռական կառավարիչը Հայազգի Սմբա-  
տեան 'Անորգ իշխանը՝ Արեան քաղա-  
քը իշխանի մը տուն գտնուելով սեղա-  
նի , հոն կը հանդիպի Աբար Աբամն  
ալ . և իշխանին խնդրանքը առանց  
պատրաստութեան կ'երգէ հետեւեալ  
երգը Այուուոյ երկրաշարժութեանը  
վրայ :

Ո՞վ էր տեսել էս աշխարհս էն օրին ,  
Ս'եր մեղացը շարժը քանդեց Այուին :

Օ՞արհուրելի էր շարժը եկած օրը ,  
Սար ու տափ՝ իրար դիպաւ , ասեմ՝ որը .  
Ս'երը՝ որդուն , որդին մոռցաւ հօրը .  
Սարսափանք էր նայելին Մասիսի ձորին ,  
Ո՞վ էր տեսել էս աշխարհս էն օրին ,  
Ս'եր մեղացը շարժը քանդեց Այուին :

Այս պատիժը ամէնն էր մեր մեղացը ,  
Ան աճազին Սարը շարժվեց տեղացը ,  
Տակուլըն արեց՝ , մարդ չի սրծաւ գեղկցը ,  
Ո՞չ հայ , ոչ թուրք , ոչ ջրհուգ , ոչ Ասորին ,  
Ո՞վ էր տեսել աշխարհս էն օրին ,  
Ս'եր մեղացը շարժը քանդեց Այուին :

Ա'երինք փակեալ , թրնդաց որոտաց ձորը ,  
Ախմիշ ելաւ՝ եկաւ ձիւնաբեր ջուրը ,  
Սրբեց տարաւ վանքը , աւաղանն աղբիւրը՝ ,  
'Պիի՛ հաւաքեց ածեց անդունդը խորին :  
Ո՞վ էր տեսել աշխարհս էն օրին ,  
Ս'եր մեղացը շարժը քանդեց Այուին :


1 Դաշտ , ցած տեղ : 3 Տակն ու վրայ ըրաւ :  
2 Մայրը : 4 Աճառ . ջրին վազելը :  
5 Սուրբ Յակոբայ Մծբնացւոյն աղօթքովը բղիւսած հրաշագործ աղբիւրն է . որուն բովն էր  
անոր վանքն ու եկեղեցին ալ , որ բոլոր կործանեցան :

Բարկացել էր մեր Բարրին էն հետին՝,  
 Իրար դիպաւ շարժեց երկինք ու գետին,  
 Չի խնայեաց սուրբ Յակօբ հայրպետին՝  
 Որ էր քեռի՝ սուրբ Լուսաւորիչ Վրիգորին՝  
 Ո՞վ էր տեսել աշխարհս էն օրին,  
 Սէր մեղացը շարժը քանդեց Լիոռին :

Լիոռին էր էս աշխարհի մեծ նշանը,  
 Չի պահելով Բստուծոյ պատուիրանը,  
 Լնմեղ տեղը կորաւ չորս հազարվանը .  
 Թէ լսելին աստուածային սուրբ բանը՝  
 Շուտ կը լսիք դարձ եկած մեղաւորին :  
 Ո՞վ էր տեսել աշխարհս էն օրին,  
 Սէր մեղացը շարժը քանդեց Լիոռին :

Նոյ վեր ելաւ տապանումը, տարումը,  
 Յակօբ հայրպետը աղօթեց քարումը,  
 Հազար ութն հարիւր քառասուն տարումը՝  
 Պատիժն եկաւ յունիսի քսան օրին :  
 Ո՞վ էր տեսել աշխարհս էն օրին,  
 Սէր մեղացը շարժը քանդեց Լիոռին :

Սարգ չիմացաւ խեղճ Լիոռուն հրնարը՝,  
 Ղաբաղիար՝ ընկաւ ամէն մին քարը :  
 Օգոյշ կացէք, դուք էլ միք գործել չարը :  
 Լա խրատը ասեց խեղճ Լքամ Լքբարը՝ :  
 Սիշտ փառք տուէք ձեր անմահ թագաւորին :



ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Սէննի արշանը :

Նին պատմութեան մէջ շատ ա-  
 նուանի ու հրաշալիք եղած է Լզիպ-  
 տոսի Թեբէ քաղքին մէջ կանգնած  
 Սեմնի արձանը, որուն համար կ'ը-  
 սեն թէ երբոր արեգական ճառագայթ-  
 ները վրան կը զարնէին՝ երաժշտական  
 ձայն մը կը հանէր : Եւ Սեմնի ըստ  
 գիցաբանից Պրիամոսի եղբօրը Տիթո-

նին և Բրշալուսոյ որդին էր, որ ետքը  
 Լզիպտոսի ու Լթուլիոյ, և կամինչ-  
 պէս ուրիշները կ'ըսեն, Պարսից վրայ  
 թագաւորեց . յետոյ Տրոյիոյ պաշար-  
 ման տասներորդ տարին՝ տասը հազար  
 զօրքով Պրիամոսի օգնութեան եկաւ  
 մեր Օարմայր նահապետին հետ մէկ-  
 տեղ, և ըստ ոմանց նոյն իսկ Օար-  
 մայրն էր արշալուսոյ արևելից սահման  
 ներուն իշխեցողը . ու շատ քաջութիւն  
 ներ ընելով՝ Նեստորի Լնտիղոքոս որ-  
 դին սպաննեց . բայց Լասայ հետ ալ  
 մենամարտելու ատենը՝ Լքիլէսէն զար-  
 նուելով ընկաւ մեռաւ : Երբոր մարմի-  
 նը խարուկին վրայ դրած կ'այրէին,  
 մոխրոցը մէջէն խումբ մը թռչուն ելաւ  
 կ'ըսեն, որ երկու բաժնուած՝ կատա-  
 ղութեամբ մէկմէկու հետ կուռեցան .  
 աս թռչունները սև ագուաւի նման էին

1 Այն անգամը :  
 2 Քեռորդի էր ըստ պատմաց :  
 3 Սարգ ճար չիրցաւ ընել Ակոռին :  
 4 Տիրուցան :  
 5 Հիմայ խեղճ Ազբար Ադամն ալ, Սմբատեան  
 էջանն ալ վախճանած են :